# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

## ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/39 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Սևան

24.05.2021թ.
ժամը 11:00

**Հանձնաժողովի նախագահ՝** Լանա Դավթյան

**Անդամներ՝** Դոնարա Լալազարյան
Մարիաննա Առաքելյան
Սարգիս Վարդանյան
Լուսինե Նիկողոսյան

**Գնումները համակարգող՝** Արսեն Հովհաննիսյան

**ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/39 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**
(Լ. Դավթյան)

1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկված գինը.
3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/39 ծածկագրով ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**
(Լ. Դավթյան)

1.1 **6-րդ և 7-րդ չափաբաժինների** համար <<Դելտա>> ՍՊԸ-ի ներկայացված գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գներին, հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 40-րդ կետի 5-րդ ենթակետով որոշում էր կայացրել վերը նշված չափաբաժիններով ընտրված մասնակցին որոշելու նպատակով կասեցնել հանձնաժողովի նիստը և բավարար գնահատված մասնակցի հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հրավիրել էր նիստ, սույն թվականի մայիսի 24-ին ժամը 11:00-ին ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում: Բանակցությունների վարման համար սահմանել էր ժամանակ 30 րոպե:

1.2 Մասնակցին էլեկտրոնային ձևով ծանուցվել էր գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

1.3 Սահմանված ժամկետում և կարգով <<Դելտա>> ՍՊԸ-ի կողմից նոր գնային առաջարկ չի ներկայացվել:

Ընդունվել է որոշում կողմ 5, դեմ 0:

## 2. Յուրաքանչյուր մասնակիցների առաջարկված գները.

(Լ. Դավթյան)

2.1<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Չափաբաժին | Գնման ենթական ապրանքի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը ՀՀ դրամով | Մասնակիցների անունները | Գնային առաջարկ ՀՀ դրամով | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք /ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար/ | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Կաուստիկ սոդա | 5,000 | | | | |
| 2 | Քացախաթթու | 9,250 | | | | |
| 3 | Ներկանյութ Ռոմանովսկու գիմզա | 8,000 | | | | |
| 4 | Իմերսիոն յուղ | 9600 | | | | |
| 5 | Նատրիումի ցիտրատ | 1,100 | | | | |
| 6 | Ռ-մատոիդ ֆակտոր Լատեքս Rematuoid factor-lex /Ռ-մատոիդային ֆակտորների որոշման թեսթ-հավաքածու/ | 5,000 | <<Դելտա>> ՍՊԸ | 7000 | 1400 | 8400 |
| 7 | Ս-ռեակտիվ պրոտեին-լատեքս C-Reactiv Protein-lex /C-ռեակտիվ սպիտակուցի որոշման թեսթ-հավաքածու/ | 5,000 | <<Դելտա>> ՍՊԸ | 7000 | 1400 | 8400 |

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին <<Դելտա>> ՍՊԸ-ի կողմից 6-րդ և 7-րդ չափաբաժինների համար ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են գնման հայտով սահմանված գներին, սակայն հանձնաժողովը որոշեց **<<Դելտա>> ՍՊԸ-ին 6-րդ և 7-րդ չափաբաժիններով** հայտարարել ընտրված մասնակից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 40-րդ կետի 5-րդ ենթակետի գ պարբերությամբ, պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ կմտնեն գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

**3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/39 ծածկագրով ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Լ. Դավթյան)

3.1 Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/39 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **ընտրված մասնակից հայտարարել՝**

**<<Դելտա>> ՍՊԸ-ին-6-րդ և 7-րդ չափաբաժիններով**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**Հանձնաժողովի նախագահ՝** Լ. Դավթյան

**Անդամներ՝** Դ. Լալազարյան

Մ. Առաքելյան

Ս. Վարդանյան

Լ. Նիկողոսյան

**Գնումները համակարգող՝** Ա. Հովհաննիսյան